ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ 1639–1736 ԹԹ.

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ.

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության կերտման հիմքում սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ խթանիչ գործոնների կողքին իր ուրույն տեղն ունի ազգային մշակութային ժառանգությունը, որի պատմության ուսումնասիրությունը բոլոր պատմական դարաշրջաններում դիտարկվել է որպես հրատապ և արդիական հիմնախնդիր: Անհերքելի է մշակույթի դերը հասարակության կայուն զարգացման, և հատկապես ազգի ինքնության կերտման և պահպանման խնդրում: Այս տեսակետից դրվատելի է Մ. Հարությունյանի գիտական աշխատությունը՝ նվիրված Արցախի մշակույթի պատմությանը, որը ժամանակագրական առումով ընդգրկում է 1639–1736 թթ.՝ մի ժամանակաշրջան, որի մշակութային կյանքի պատմության ուսումնասիրությունը հանգամանորեն լուսաբանված չէր: Ժամանակաշրջանի ընտրության վերլուծությունը հեղինակը գիտականորեն ներկայացրել է՝ «Վարչաիրավական համակարգի համառոտ բնութագիր» խորագիրը կրող բաժնում:

XVI դարի սկզբներից մինչև XVII դարի 30-ական թվականների վերջերն ընդգրկող ժամանակաշրջանը, ըստ հեղինակի մեկնաբանության, հայ ժողովրդի «պատմաքաղաքական կյանքում դրոշմվեց որպես նոր աղետներով և փորձություններով լի ժամանակաշրջան» (էջ 16): Խնդիրն այն է, որ Սեֆյան Իրանը և Օսմանյան կայսրությունը, շարունակելով իրենց նվաճողական քաղաքականությունը, փորձում են քաղաքական առաջնության հասնել Առաջավոր Ասիայում: Մյուս կողմից էլ նրանց միջև անընդհատ մղվող պատերազմների առիթը կրոնական մոլեռանդությունն էր. շահ Իսմայիլը երկրի պետական կրոն հայտարարելով շիիզմը, իսլամի մյուս տարատեսակի՝ սուննիզմի հետևորդների դեմ անհաշտ պայքար սկսեց: Սուննիզմը հովանավորող Թուրքիան ընդունեց այդ մարտահրավերը: Այս պարագայում, երկու պետությունների կողմից ծավալված ռազմական գործողությունների թատերաբեմ դարձել

էր Հայաստանը: Թուրք-պարսկական պատերազմներն ավարտվեցին 1639 թ. մայիսի 17-ին, Կասրե-Շիրինի պայմանագրով:

Հեղինակն ընդգրկելով շուրջ 100 տարվա իրադարձություններ՝ մինչև Նադիր շահի թագավորության սկիզբը, անտիպ ձեռագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, վավերագրերի, պարբերական մամուլի տեղեկությունների և գրականության հիման վրա կերտել է մի երկ, որն իր արժեքավոր նյութերի առկայությամբ և հետաքրքրությամբ կլանում է ընթերցողին: Այդ շրջանը Արցախի մշակույթի պատմության չուսումնասիրված էջերից է, որը կհետաքրքրի ոչ միայն գիտական հասարակությանը, այլև ուսանողներին, բարձր դասարանի աշակերտներին, ընթերցող լայն շրջանակներին:

Մենագրությունը բաղկացած է ներածությունից, յոթ փոխկապակցված ենթահարցերից, վերջաբանից (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), աշխատանքում օգտագործված ձեռագրերի աղյուսակից, գրականության ցանկից: Աղբյուրագիտական (նաև արխիվային նյութեր, տպագիր սկզբնաղբյուրներ) և պատմագիտական մեծ հենքի վրա լուսաբանվել են Արցախի մշակույթի հետևյալ բնագավառները՝ գիտակրթական կյանքը, կերպարվեստը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, դեկորատիվ-կիրառական արվեստը՝ իրենց ճյուղերով:

Հեղինակը անհերքելի փաստերով ներկայացրել է գրչության նշանավոր կենտրոնների՝ Դադիվանքի, Ամարասի, Գանձասարի, Գտչավանքի, Խանաձախի, Ավետարանոցի, Խզնավարի, Փառիսոսի, Երից Մանկանց վանքի և այլ վայրերի ձեռագրերի պատմությունը: Նա ցույց է տվել հասարակական, մասնավոր, եկեղեցական, վանական դպրոցների գործունեության հիմնական ուղղությունները, դարաշրջանի կրթական համակարգի դրսևորման ձևերը, ընդգծել է Գանձասարի Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի, Հովհաննես երեցի, Մարիամ ապաշխարողի, Մկրտիչ աբեղայի, Գրիգոր երեցի, Հովհաննես Ապահունեցու, Իգնատիոս Մեծշենցու, Սիմոնի, Մխիթարի, Բարսեղի, Արիստակես երեցի, Ստեփանոս սարկավագի, Սարգսի, Վարդանի, Եսայի Հասան-Ջալալյանի և այլոց դերի կարևորությունը: Հեղինակը նշել է գիտության բնագավառում հայ հոգևորական և հրատարակիչ Մատթեոս սարկավագ Ծարեցու գործունեության մասին, արժեվորել նրա դերը հայ տպագրության բնագավառում: Արվեստի ճյուղերից՝ կերպարվեստին առնչվող հարցում Մ. Հարությունյանն անդրադարձել է գրչագիր մատյաններում արված գծանկարներին, գունանկարներին, անվանաթերթերին, խորաններին, լուսանցազար-

դերին, սրբապատկերներին, պատմողական թեմատիկ տեսարաններին և այլ զարդամոտիվներին: Հեղինակը վերլուծել է մանրանկարչության և զարդանկարչության բնագավառներում անգնահատելի հետք թողած ծաղկողների՝ Գրիգորի (Չարեքա վանք), Գայանեի (Ավետարանոց), Գրիգոր քահանայի, Ղազար սարկավագի (Քարահատ), Ավետիս քահանայի (Պապաջան կամ Պապճան), Մովսես Գորիսեցու, Մովսես երեցի և ուրիշների ստեղծագործությունները:

Մ. Հարությունյանը շատ հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ է ներկայացրել ճարտարապետությանն ու քանդակագործությանը նվիրված բաժիններում՝ անդրադարձ կատարելով եկեղեցաշինության, բնակելի տների ձևերի՝ ապարանքների, ինչպես նաև կամրջաշինության, եկեղեցիների արտաքին պատերի, ճակտոնների, մուտքերի, պատուհանների շրջանակների ու գոտիների, զանգակատների, թմբուկների վրա արված գեղաքանդակների և այսպես կոչված «մանր պլաստիկա»-յի (փոքր ձևերի քանդակագործություն) ձևերի նկարագրությանը:

Դեկորատիվ-կիրառական արվեստին վերաբերող բաժնում հեղինակը մանրակրկիտ ներկայացրել է գորգագործության, ասեղնագործության, ժանեկագործության, արծաթագործության, ոսկերչության, ակնագործության, փայտագործության դրսևորման ձևերն ու պատմությունը:

Մենագրության արժանիքներից է Մատենադարանի տասնյակ ձեռագրերի օգտագործումը և աշխատանքի վերջում դրանց՝ ժամանակագրական կարգով հետաքրքիր աղյուսակի մեջ ընդգրկելը:

Աշխատանքում զետեղված են Մատենադարանի ձեռագրերից քաղված արժեքավոր նկարներ, որոնք ընթերցողին կտան հիմնավոր պատկերացում ժամանակաշրջանի մշակութային արժեքների մասին:

Մարինե Հարությունյանի մենագրությունը համարում ենք արժեքավոր աշխատություն, որը պատմական և իրավական տեսակետից կարող է հանդիսանալ լրացուցիչ գրականություն՝ Արցախում այդ բարդ ժամանակաշրջանի հայկական մշակութային ժառանգության առկայությունը ապացուցելու, ինչպես նաև մի շարք կեղծարարներին հակադրվելու համար: